

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ. ԽՆԴԻՐՆԵՐ, ԼՈՒԾՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Թեհմինէ Մարտոյեան
tehminemartoyan@gmail.com

ՄՈՒՏՔ

Սիրիահայ համայնքը կարեւոր դեր է խաղացել եւ շարունակում է խաղալ ազգային արժէքների ստեղծման գործընթացում. այն հայկական մշակոյթի, պատմական յիշողութեան, ազգային ինքնագիտակցութեան կրողն է: Կրթութեան, գիտութեան, գրականութեան, մամուլի եւ այլ բնագաւառներում սիրիահայութեան յաջողութիւններն անգնահատելի են մշակոյթի զարգացման եւ հայապահպանութեան տեսանկիւնից: Սիրիահայ մշակոյթը հայ մշակոյթի անքակտելի մասն է, իսկ սերունդներին փոխանցուած մշակութային ժառանգութիւնը նպաստում է ազգային ինքնագիտակցութեան եւ ոգու պահպանութեանը: Դժբախտաբար, պատմական զարգացման այս ժամանակահատուածում քաղաքական իրադարձութիւնները Սիրիայի Արաբական Հանրապետութիւնում (ՍԱՀ) անբարենպաստ են եւ կործանարար:

Զթերագնահատելով գերտէրութիւնների «մտահոգութիւնները» Սիրիայի ճգնաժամի առնչութեամբ, հարկ է առանձնացնել Հայաստանի Հանրապետութեան համար առաջնային համարուող խնդիրը՝ սիրիահայութեան անվտանգութիւնը:

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Ինչպէ՞ս իրականացաւ սիրիահայերի հայրենադարձութիւնը, ինչպէ՞ս արձագանգեցին ՀՀն եւ ԼՂՀն, կա՞ր արդեօք հասարակութեան մէջ սիրիահայերի ներգրաւման յստակ եւ համակարգուած ծրագիր: Որո՞նք են առկայ խնդիրները, որ այսօր ծառացած են սիրիահայերի առջեւ:

«Հասարակութեան մէջ սիրիահայերի ներգրաւում» ասելով նկատի ունենք սիրիահայութեան եւ միջավայրի փոխյարմարումը, այդ գործընթացում կարեւորելով յատկապէս միջավայրի դերակատարութիւնը: Միջավայրին յարմարուելը կամ միջավայրի յարմարեցումը սիրիահայութեան առաջնահերթ խնդիրներից է:

Հարկ է նշել, որ ՀՀում եւ ԼՂՀում իրականացուցին տարաբնոյթ միջոցառումներ: Այսպէս, 18 Յուլիս 2012ին Երեւանում «Սեւծովեան Տարածաշրջանի Խաղաղաշինական Յանգ»ի աջակցութեամբ իրաւիրուեց կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտօնատարներ, միջազգային կառոյցների ներկայացուցիչներ: «Սիրիա. Տարածաշրջանային Համատեքստն ու Հայերի Հարցերը» վերնագրով քննարկման

մասնակիցների արտայայտած կարծիքների համաձայն՝ «նախ անհրաժեշտ է սիրիահայերի՝ Հայաստան տեղափոխությունը յստակ արտայայտում ընդունելու և կամքը, ինչը ո՛չ նախկինում է արտայայտվել, ո՛չ էլ այսօր է լսելի: Երկրորդ՝ անհրաժեշտ է Հայաստանի պատրաստակամությունը՝ ընդունելու սիրիահայերին: Երրորդ՝ անհրաժեշտ է մարդասիրական միջամտության գործողությունների ծրագիր եւ դրա իրականացման ռեսուրսային իրավասական բազա՝ յստակապես Սփիւռքի այնպիսի խոշոր համայնքի պարագայում, ինչպիսին Սիրիան է: Ընդ որում, մարդասիրական աջակցության ջանքերի մոբիլիզացիան չպէտք է ծանրանայ բացառապես Արփաքին գործերի եւ Սփիւռքի նախարարությունների ու միգրացիոն պետական ծառայության ուսերին: Թէպէտ նշուած պետական մարմինները կենտրոնական դեր ունեն աջակցության քաղաքականության մշակման եւ իրականացման գործում, այդուհանդերձ, անհրաժեշտության դէպքում որեւէ պետական մարմին անմասն չպէտք է մնայ. չէ՞ որ աջակցության մեխանիզմը գործի դնելու համար անհրաժեշտ են ֆինանսական ռեսուրսներ, կացարաններ եւ հանրային այլ միջոցներ: Այսպէս, ՀՀ Կենտրոնական Բանկը, կառավարությունը եւ այլ մարմիններ վարչական փարաձքներ ունեն, օրինակ՝ հանգստեան տներ, որոնք անհրաժեշտության դէպքում պէտք է պատրաստ լինեն ընդունել եւ սպասարկել սիրիահայ փախստականներին»¹:

Սիրիայում քաղաքացիական պատերազմի հետեւանքով - հիմնականում 2012ից - տասնեակ հազարաւոր ընտանիքներ իրենց հանգրուանը Մայր Հայրենիքում գտնելու յոյսով ժամանեցին ՀՀ եւ ԼՂՀ:

ՀՀ-ում սիրիահայերի հաստատման ուղիները տարբեր են եղել. Հալեպ-Երեւան, Պէյրութ-Երեւան չուերթեր, Հալեպ-Երեւան փոխադրակառքերի երթուղի, անհատական մեքենաներով ժամանումներ²: Հարկ է նկատել, որ սիրիահայերի հայրենադարձութիւնը³ տեղի ունեցաւ բաւականին դժուար պայմաններում, հետեւաբար հասարակութեան մէջ նրանց ներգրաւման խնդիրը բարդ է եւ ժամանակատար: Այս հարցում յատկապէս կարեւորում է Հայրենիքի հոգաձութիւնը սիրիահայերի նկատմամբ: Բացի դրանից, հասարակական կազմակերպութիւնները, անհատները եւ ողջ հասարակութիւնը պէտք է միաւորուեն եւ անշահախնդիր նուիրումով աջակցեն սիրիահայերին: Նրանց գործադրած ջանքերը պէտք է նպաստեն, որ սիրիահայերը վերախմաստաւորեն իրենց կեանքն ու վերստին գտնեն ապագայի հանդէպ կորցրած հաւատը հենց իրենց հայրենիքում, մանաւանդ որ տեղի ունեցած սարսափների արհաւիրքները վերապրած սիրիահայերի շրջանում հայրենիքը լքելու վտանգ կայ:

14 Յունուար 2013ին որոշում ընդունուեց սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական յանձնաժողով ստեղծելու մասին⁴: ՀՀ կառավարութիւնը մէկ այլ որոշում ընդունեց (23

Օգոստոսի 2012՝ n 1106ն) Սիրիայի Արաբական Հանրապետության՝ ազգութեամբ հայ քաղաքացիների վարորդական վկայականները փոխանակելու մասին⁵:

Պետութիւնը ՀՀ քաղաքացիների, այդ թում՝ երկքաղաքացիների, սիրիահայերի համար երաշխաւորում է պետական ուսումնական հաստատութիւններում անվճար ընդհանուր միջնակարգ կրթութիւն, մրցութային կարգով անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագոյն եւ յետբուհական մասնագիտական կրթութիւն⁶:

ՀՀում օտարերկրացիների (սիրիահայերի) իրաւունքների մասին համառօտագրում նշուած է, որ «*իրաքանչիւր ոք, այդ թում՝ օտարերկրացին ունի օրէնքով սահմանուած եղանակներով բժշկական օգնութիւն եւ սպասարկում ստանալու իրաւունք: ՀՀում բժշկական օգնութիւն եւ սպասարկում իրականացնողները պարտաւոր են իրաքանչիւր մարդու (այդ թում՝ օտարերկրացու) ցուցաբերել անյետաձգելի, առաջին բժշկական օգնութիւն՝ անկախ այդ օգնութեան դիմաց վարձաւորութիւնը երաշխաւորող հիմքերի եւ այլ հանգամանքների առկայութիւնից: Սիրիահայերն օգտուում են պոլիկլինիկայի ծառայութիւններից անվճար*»⁷:

2 Հոկտեմբերի 2013ին հրապարակուեց ՀՀ Սփիւռքի Նախարարութեան, ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) եւ Գալուստ Կիլպենկեան Հիմնարկութեան համատեղ յայտարարութիւնը Հայաստանի բարձրագոյն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններում սովորող սիրիահայ ուսանողների կրթաթոշակների փոխհատուցման մասին: 2013-14 կրթաշրջանին շուրջ 400 ուսանող օգտուեց համատեղ այս ծրագրից, իսկ 2014-15 կրթաշրջանի համար նոյնքան թուով ուսանող ստացաւ կրթավճարի փոխհատուցում: Ծրագիրը շարունակուելու է նաեւ 2015-16 ուսումնական տարեշրջանին⁸:

Միանգամայն իրաւացի է արաբագէտ Արմէն Պետրոսեանը, երբ նշում է. «*Սիրիահայութեան խնդիրը համայն հայութեան խնդիրն է, որը պէտք է միաւորի աշխարհասփիւռ հայութեանը նրա մի հատուածին համակողմանի աջակցութիւն ցուցաբերելու գործում: Անընդունելի է սիրիահայութեան խնդիրը փարբեր բնոյթի շահարկումների առարկայ դարձնել թէ՛ Հայաստանում եւ թէ՛ նրանից դուրս: Մի բան ակնյայտ է, որ այս հարցում միասնութիւն, համախմբուածութիւն, եւ լուրջ համագործակցութիւն է պահանջուում, եւ դրանում առանցքային դերակատարութիւն պէտք է ունենայ ՀՀն՝ մի կողմից որպէս միջազգային յարաբերութիւնների եւ միջազգային իրաւունքի սուբեկտ, միւս կողմից՝ որպէս բոլոր հայերի Մայր Հայրենիք: Եթէ մինչ այս՝ Հայաստանին, յանձին Սփիւռքի Նախարարութեան, յաջողուել է մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան բնագաւառներում բաւականին լուրջ միջոցառումներ*

իրականացնել, ապա այժմ ժամանակն է համախմբուելու եւ ճգնաժամային հարցերում միասնական դիրքորոշում որդեգրելու, գործողությունների ռազմավարական ծրագիր մշակելու համար, քանի որ աշխարհի որեւէ պետութիւն ապահովագրուած չէ հակամարտութիւններից, ճգնաժամներից, բնական աղէտներից եւ այլ ֆորսմաժորային իրավիճակներից, եւ նման խնդիրներ կարող են առաջանալ նաեւ այլ երկրներում հաստատուած մեր հայրենակիցների համար, ինչին համարժէք գործողությունների ռազմավարութեան ստեղծումն արդէն իսկ ազգային անվտանգութեան հրամայական է: Նման ծրագրերի մշակման գործում պէտք է հաշուի առնուեն Սփիւռքում գործող մարմինների, այն է՝ հայ համայնքների կառավարման համակարգի, եկեղեցական կառոյցների գործունէութեան եւ դերակատարութեան, մշակութային, երիտասարդական միութիւնների դերակատարութեան առանձնայատկութիւնները: Այս հարցը պահանջում է չափազանց լուրջ մօտեցում, նաեւ գիտական ուսումնասիրութիւն, փարբեր ոլորտների մասնագէտների ներգրաւուածութիւն: Անհրաժեշտութեան դէպքում պէտք է համակարգուի համահայկական բարեգործական կառոյցների աշխատանքները՝ մեր հայրենակիցներին նիւթական աջակցութիւն ցուցաբերելու նպատակով: Սիրիահայերին աջակցութեան խնդիրը կարող է լուրջ նախադէպ դառնալ նման իրավիճակներում Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան համար»⁹:

Զթերագնահատելով ՀՀ եւ ԼՂՀի՝ պետական մակարդակով իրականացուած միջոցառումները՝ ուղղուած սիրիահայութեան խնդիրների բացայայտմանն ու լուծմանը, այս ուսումնասիրութիւնը պատրաստելիս իրական եւ ամբողջական պատկերը տեսնելու եւ անաչառ ներկայացնելու նպատակով դիմել ենք հարցազրոյցների մեթօդին: Հարցազրոյցներն իրականացուել են 2015ին, հիմնականում Երեւանում, Աբովեանում եւ այլ քաղաքներում բնակուող սիրիահայերի շրջանում: Քսանհինգ սիրիահայի հետ մեր վարած հարցազրոյցները հիմնականում իրականացրել ենք իրենց աշխատավայրերում՝ անդրադառնալով կացութեան կարգավիճակին, աշխատանքային գործունէութեանը, կրթութեան հիմնահարցին, իրենց յուզող խնդիրներին: Որպէս հիմնանիւթ օգտագործել ենք նաև սիրիահայութեան հետ անցկացուած զրոյցները: Հետեւաբար, շատ դրոյթներ եւ տեսակէտներ կարող են եւ չհամընկնել պետական, պաշտօնական վիճակագրական տուեալների հետ:

Սիրիահայութեան շրջանում իրականացուած ամէնատարբեր մասնագիտութիւնների, մտածողութեան, աշխարհայեացքի, հնարաւորութեան, տարիքի տէր մարդկանց հետ ունեցած հարցազրոյցների արդիւնքներն ամփոփելիս սիրիահայութեան խնդիրները պայմանականօրէն բաժանեցինք ըստ հրատապութեան:

Պարզ դարձաւ, որ սիրիահայութեան գերակշիռ մեծամասնութիւնն ունի հետեւեալ հիմնական, կարեւոր եւ կենսական խնդիրները.-

Ա) ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Սփիռքի Նախարարության տուեալներով 2012ից մինչ այսօր ատելիք քան 11 հազար սիրիահայ է հաստատուել ՀՀում¹⁰:

Ինչպես իրաւացիօրէն նշում է ազգագրագէտ Արսէն Յակոբեանը «սիրիահայերի՝ դէպի Հայաստան ընտրութիւնը, ՀՀ քաղաքացիութիւն կամ կեցութեան երկարատեւ իրաւունք ձեռք բերելը, ի թիւս այլ գործօնների (հայրենիքի ընկալում են.), թելադրուած է եղել նաեւ սիրիական անձնագրերով այլ երկիր, բացառութեամբ հարեւան երկրների (Յորդանան, Լիբանան, Թուրքիա, Իրաք) մեկնելու լուրջ խոչընդոտներով: Հայաստանն ընտրուել է նաեւ այն պարճառով, որ ՀՀ քաղաքացիութիւն/երկրաքաղաքացիութիւն ստանալը, եւ ՀՀ անձնագիրը թոյլ է տալիս մեկնել նաեւ այլ երկրներ՝ ապահովելով տեղաշարժի ազատութիւն, ինչպէս նաեւ որոշակի իրաւաքաղաքական պաշտպանութիւն: Բնականաբար, մի բան է ունենալ այլ երկրներում փաստացի չճանաչուող անձնագիր, այլ՝ միջազգայնօրէն ճանաչուած անձնագիր»¹¹:

Միանգամայն ճիշտ է նկատել Յակոբեանը, որ ՀՀն պէտք է ունենար սիրիահայերի փաստագրման որոշակի համակարգ ու գործիքակազմ - թերեւս նաեւ համապատասխան տուեալների շտեմարան - քանի որ տուեալ պարագայում խնդիրը ոչ թէ ՀՀ սահմանը հատելու սովորական գործընթացի խնդիր է, այլ ըստ էութեան խմբային ներգաղթ՝ դէ ֆակտօ փախստականական բնութագրով¹²:

ՀՀում հաստատուած սիրիահայերը ներկայացնում են ընկերային տարբեր շերտեր՝ գործարարներ, արհեստաւորներ, բժիշկներ են.¹³:

ՀՀում հաստատուած սիրիահայերն ունեն տարբեր իրաւական կարգավիճակներ՝ ՀՀ քաղաքացիներ (երկրաքաղաքացիներ), փախստականներ եւ ապաստան հայցողներ, ժամանակաւոր կամ մշտական (1, 5, 10 տարի ժամկետով) կեցութիւն ունեցողներ¹⁴: Ըստ ՀՀ Սփիռքի Նախարարութեան տուեալների՝ 2012ին ՀՀ քաղաքացիութիւն ստացել է 5026 սիրիահայ, 2013ին՝ 4150 սիրիահայ, 2014ին՝ 153 սիրիահայ: 2012-14՝ ՀՀ քաղաքացիութիւն է ստացել 10,707 սիրիահայ: 2013-14ի ընթացքում ձեռք են բերել ժամանակաւոր (1 տարի) 220, մշտական (5 տարի) 155, յատուկ կարգավիճակներ (10 տարի) 390 սիրիահայեր¹⁵:

Թէեւ ՀՀի եւ ԼՂՀի կառավարութիւնները խնդիր են դրել լուծել սիրիահայերին բնակարաններով ապահովելու հարցը, այնուամենայնիւ գործադրուող ջանքերը բաւարար չեն, որպէսզի հարցը գոնէ կիսով չափ լուծում ստանայ: Այսպէս, պաշտօնական տուեալների համաձայն՝ ՀՀ Սփիռքի Նախարարութեանն ու «Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող» ՀԿին դիմել է 911 ընտանիք, 3500 անդամով, ժամանակաւոր կացարանով կամ վարձի փոխհատուցմամբ ապահովելու

խնդրանքով, միեւնոյն ժամանակ 24 ընտանիք բնակում է անհատ բարերարների բնակարաններում, իսկ 72ը՝ Հայ Կաթողիկէ Եկեղեցու հիւրատանը¹⁶: ՀՀ կառավարութիւնը 6 Յունիս 2013ին որոշում ընդունեց Աշտարակ քաղաքում «Նոր Հալէպ» թաղամասի կառուցմանն աջակցելու մասին ՍԱՀում տիրող պատերազմական իրավիճակի հետեւանքով ՀՀում բնակուող ՍԱՀ ազգութեամբ հայ քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով¹⁷:

Այն նախատեսում էր Սփիւռքի կառոյցների ու բարերարների միջոցների հաշուին համապատասխան պայմաններով «Նոր Հալէպ» թաղամասում բնակելի տուն ստանալու ցանկութիւն յայտնած սիրիահայերին ապահովել բնակարաններով: Այս նախաձեռնութիւնը կեանքի չկոչուեց. ծրագիրը մշակելիս հաշուի չէր առնուել այն կարեւոր փաստը, որ սիրիահայերի դրամական միջոցները բաւարար չէին այդ թաղամասում բնակելի տուն ձեռք բերելու համար:

Աւելին, շատ ընտանիքներ, որոնք քիչ թէ շատ հնարաւորութիւն են ունեցել բնակարան ձեռք բերելու, կանգնած են իրենց գոյքը հայրենիք վերադարձնելու խնդրի առաջ: Սիրիահայ Կարապետ Քալոյին ՀՀ կառավարութիւնը չի կարողանում յստակ պատասխանել, թէ ինչ անի, որ հեռուում թողած տան գոյքը Հայաստան տեղափոխի: Կարապետ Քալոյի հիասթափութեան արտայայտութեան մասին է հետեւեալ խոստովանութիւնը. «Եթէ իմանայինք, որ հայրենիքում պէտք է այսպիսի քիւրդկաւորական քաշքշուքների մէջ ընկնենք, պատերազմից կը փախնէինք մէկ ուրիշ երկիր»... «[Արեւմտեան երկրներ] Ամէն ինչով իրենց կ'ընդունին՝ փուն, ամսական, բժիշկ, դեղեր: Ամէն ինչով... Բոլոր սուրիացիները կը փախնեն [ՀՀ-ից]: Ինչու՞ կը փախնեն: Երբ որ լաւ ըլլար, ինչու՞ կը փախնին: 150 փուն մեր Ղամիշլիէն հոս փոխադրուան, բոլորը Բելգիա գացին, Հոլանդիա գացին»¹⁸:

Մէկ այլ օրինակ է Ալեքսան Սողոմոնեանի յայտարարութիւնը. «Հալէպը փրփուի՝ [եւր] կը գնամ: Հալէպ «բարաքեթ» կայ, խելք կայ, գործ կայ, փող կայ: Այսօրեղ աղքատ քաղաք է»: Սողոմոնեանը, ով մէկուկէս տարի է՝ ինչ Հայաստանում է, իր ընտանիքի ապագան Հայաստանի հետ չի կապում: Համատարած գործազրկութեան պայմաններում սիրիահայերից շատերի պէս նա էլ չի կարողանում կայուն ու բաւարար աշխատավարձով աշխատանք գտնել: Սողոմոնեանն արդէն երրորդ աշխատանքն է փոխում: Նրա ընտանիքում այժմ կինն ու մեծ որդին են աշխատում: Ստացած գումարով հազիւ հասցնում են տան վարձը վճարել ու հացի խնդիրը լուծել¹⁹:

Անորոշութեան մէջ է նաեւ Փեկի Պապօղլեանի ընտանիքը: Չնայած սիրում են հայրենիքը, բայց դեռ չգիտեն, թէ որտեղ իվերջոյ կը հանգրուանեն: «Ամէն ինչ կախեալ է գործից: Թէ որ գործ ունենաս,

հանգիստը կեանք ունենաս, շափ լաւ երկիր է: Իհարկէ, որ փան վարձ ես փայխա՝ կեանքը այստեղ մի քիչ աւելի թանկ է»՝ ասում է նա²⁰:

Հարկ է նկատել, որ ինչպէս ՀՀում, այնպէս էլ ԼՂՀում հաստատուած սիրիահայ շատ ընտանիքներ կենցաղային տարրական պայմանների բարելաւման անհրաժեշտութիւն ունեն: Բերձորում, Իշխանաձորում եւ Կովսականում պետական եւ բարեգործական տարբեր աղբիւրներից ստացուած գումարներով բնակարանների վերանորոգման աշխատանքներ են իրականացուել:

ՀԲԸՄԻ ու Չերչեան Ընտանիք Հիմնադրամի առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ գիւղտեխնիկայի աջակցութեան ծրագիր է իրականացում Քաշաթաղում բնակուող սիրիահայ ընտանիքների համար: ԼՂՀ հարաւարեւմտեան հատուածի Ողջի Գետի ակին գտնուող Կովսականում բնակութիւն հաստատած սիրիահայ ընտանիքներին անհատոյց տրամադրուեց գիւղտեխնիկա: Ձեռք են բերուել 3 Բելառուս MT3-82.1 մակնիշի տրակտորներ, 2 սերմնացան, ցաքաններ, պարարտանիւթերի ցրիչներ, թունաքիմիկատների սրկիչ եւ այլ գիւղտեխնիկա: Շատ սիրիահայեր մեծ խանդավառութեամբ իրականացնում են հողագործական աշխատանքներ՝ նպաստելով նաեւ Քաշաթաղի գիւղատնտեսութեան զարգացմանն ու նրանց ընտանիքների խնդիրների լուծմանը²¹:

Բ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐ

Հարցազրոյցների արդիւնքում պարզ դարձաւ, որ խնդիրներն իրականում խորքային են, պահանջում են համակարգուած եւ մանրագնին լուծում: Մատնանշուած խնդիրներն են.- *«հայեցակարգի բացակայութիւն, դասփարակութիւն, օրէնքներ, ռուսախօսութիւն, կենցաղային եւ ապրելակերպի հետ կապուած դժուարութիւններ, գնաճ, աշխատանքային դժուարութիւններ, յարկապէս արտադրութիւն կազմակերպելը, առեւտրորը, հարկային ու մաքսային օրէնքները, ցածր աշխատավարձեր, Հայաստանի ապագայի նկատմամբ տեղացի ժողովրդի ունեցած բացասական կարծիք, բացակայութիւնը՝ կազմակերպչական մարմնի, որը կը համակարգի այս նոր համայնքի հետ կապուած աշխատանքները, նիւթական, ընկերային ու բարոյական խնդիրներ: Արտագաղթի պարճառները իրենց սեփական ինքնավստահութեան եւ նաեւ երկրի ապագայի նկատմամբ վստահութեան բացակայութիւնն է, ինչպէս նաեւ՝ արագ լաւ կեանք ունենալու ձգտումը»²²:*

Հարցազրոյցների մասնակցած սիրիահայերի արտայայտած տեսակէտները դասակարգելով եւ համադրելով՝ իրենց խնդիրների վերաբերեալ առանձնացրել ենք երկու մօտեցում.

Ա. Լաւարեսական

Բ. Յոռեղեսական

Յոռետեսական մտեցման ներկայացուցիչների խորին համոզմամբ՝ ոչինչ չի փոխուի այնքան ժամանակ, քանի դեռ երկրում տնտեսությունն անկայուն է, բաւարար չափով զարգացած չեն արդիւնաբերութիւնը, գրօսաշրջութիւնը եւն.:

Լաւատեսական մտեցման ներկայացուցիչները, թէեւ վկայակոչում են բազում խնդիրների առկայութիւնը, այնուամենայնիւ, պատրաստակամութիւն են յայտնում պայքարելու ծառայած դժուարութիւնների դէմ՝ համոզուած լինելով որ բոլոր խնդիրները լուծելի են:

Այս մտեցումներն իրենց հերթին ունեն լաւ եւ վատ ելքեր:

Այսպէս, յոռետեսական մտեցումը, փաստօրէն, յանգեցնում է արտագաղթի, որը բացասաբար է ազդում առաջին հերթին սիրիահայերի հոգեբանութեան վրայ այն իմաստով, որ հերթական անգամ հարկադրուած հեռանում են Հայրենիքից: Այն բացասական է ազդում նաեւ սփիւռքահայութեան վրայ, հայապահպանութեան, հայութեան՝ իր ապագայի հանդէպ հաւատքի վրայ, Հայկական Դատի հետապնդման աշխատանքների վրայ, Հայաստանի Հանրապետութեան հանդէպ արտասահմանի հայութեան կապուածութեան վրայ:

Լաւատեսականի պարագայում դրական եւ ցանկալի արդիւնք է գրանցում: Այսպէս, օրինակ, հասարակութեան գիտակից խաղ կարելու է սիրիահայի՝ Հայրենիքում մնալու փաստը. գաղտնիք չէ, որ սիրիահայերը մեծ նպաստ եւ լուսաւորութիւն բերեցին նախ իրենց օրինակելի վարքագծով, ապա՝ իրենց աշխատասիրութեան շնորհիւ զարգացրեցին ամէնատարբեր ոլորտներ՝ արհեստագործութիւն, հողագործութիւն եւն.: Շատ սիրիահայեր ինքնատիպ մշակոյթ են մտցրել գիւղատնտեսութեան մէջ՝ նոր մշակաբոյսեր են բերել ԼՂՀ, ինչպէս, օրինակ, ձիթենին: Շատերն էլ՝ լուրջ ներդրումներ են կատարում ոչ միայն ՀՀում, այլեւ ԼՂՀ հարաւում եւ Ստեփանակերտին յարակից տարածքներում:

Այդուհանդերձ, առկայ խնդիրները շատ են, լուծման հնարաւոր տարբերակներն էլ բաւարար չեն: Սա, թերեւս ամէնադժուար յաղթահարելին է, որը ե՛ւ ՀՀի, ե՛ւ ԼՂՀի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից է: Սակայն դա դեռ չի նշանակում, որ հասարակութիւնն անելիք չունի:

Սիրիահայութեան խնդիրները լուծուած կարող ենք համարել, եթէ իրադարձութեանը պատասխան տալով՝ ստանանք ցանկալի արդիւնք:

Այդ ցանկալի արդիւնքը կարելի է գրանցել բացառապէս եռամիասնութեան ձեւով՝ Հայրենիք, հասարակութիւն, սիրիահայութիւն:

Սիրիահայութեան աջակցութիւնը ոչ միայն Հայրենիքի հոգածութեան, այլեւ ՀՀի իւրաքանչիւր քաղաքացու պարտքն է:

Կայ եւ սիրիահային յուզող ներքին հոգեկան խնդիր: Երեւանում, Ստեփանակերտում կամ Հալեպում ապրող սիրիահայը տագնապ է ապրում ամէնատարբեր դրսեւորումներով: Օրինակ, Երեւանում կամ Աթէնքում հաստատուած սիրիահայը, ունենալով քիչ թէ շատ բարենպաստ պայմաններ, միեւնոյն է իր հոգու խորքում մեղք եւ դաւաճանութիւն է զգում այսօր Սիրիայում ապրող իր հայրենակցի նկատմամբ: Ինքնին ավստասնքի զգացումը կարող է իրական քառս ստեղծել մարդու հոգեկան աշխարհում: Հարցազրոյցների արդիւնքում պարզ դարձաւ, որ այսօր սիրիահային ամէնաշատը սրտացաւ եւ անկեղծ վերաբերմունքն է պակասում:

Բարեբախտաբար սիրիահայութեան առաջ ծառայած խնդիրները լուծելի են: Եթէ իւրաքանչիւր քաղաքացի մտածի, թէ ինչով կարող է օգտակար լինել առնուազն մէկ սիրիահայի՝ լուրջ յաջողութիւններ կը գրանցուեն: Իսկ այդ նպատակին հասնելու ճանապարհին գլխաւոր դերակատարը եւ շարժիչ ուժը հասարակութիւնն է:

«Սիրիայի Ճգնաժամը եւ Հայաստանի Ռազմավարական Խնդիրները» համառօտագրում կարդում ենք. *«Անհրաժեշտ է շարունակել ներքին ռեսուրսների համախմբումն ու հասարակութեան իրազեկումը. հայաստանցին պիտի յստակ գիտակցի սիրիահայերին աջակցելու կարիքն ու մեխանիզմները, իսկ պետական մարմինները պիտի պատրաստուեն դիմակայելու հնարաւոր սցենարներին եւ մշակեն համագործակցութեան ու համակարգման գործուն ուղիներ»²³:*

Նշենք, որ եթէ նոյնիսկ սիրիահայութիւնն ապահովուի շքեղ բնակարաններով եւ բարձր վարձատրուող աշխատանքով, միեւնոյնն է, դա խնդրի մասնակի լուծում կը լինի: Հասարակութիւնն իր հերթին պէտք է նպաստի սիրիահայութեան հոգեւոր պահանջմունքների բաւարարմանը, հոգեբանօրէն աջակցի եւ անկեղծօրէն ապրումակցի: Սիրիահայութեան վերաբնակեցումը ՀՀում, ԼՂՀում կամ աշխարհի ցանկացած երկիր տեղի է ունենում հարկադրուած տարագրութեան հետեւանքով: Իսկ տարագիր լինելը բոլոր ժամանակներում բաւականին բարդ է եղել: Տարագրի ներաշխարհում իսկական քառս է տիրում: Դա լաւ են պատկերացրել հին յոյները, երբ յանցագործի համար առաւել սոսկալի պատիժ սահմանել են տարագրութիւնը՝ գերադասելով այն սովորական մահապատժից:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Թէեւ սիրիահայութեան խնդիրները բազմազան են, իսկ հնարաւոր լուծումները ժամանակատար, այնուամենայնիւ, ուրախութեամբ կարելի է առանձնացնել այն մասնաւոր դէպքերը, երբ Հայաստանում ապրող սիրիահայը նշում է. *«Ուզում եմ իմ հայրենիքում ապրել, որ չձուլուենք. մնացինք, դիմադրեցինք, չզնացինք: Հնարաւոր է՝ արտագաղթողը*

բարեկեցիկ կեանք ունենայ, ես չեմ ուզում, որ իմ Կայծակ որդին կամ Անի դուստրը սփոխուած լինեն փոխել իրենց անունները...»²⁴:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Համառոտագիր՝ Սիրիայի Ճգնաժամը եւ Հայաստանի Ռազմավարական Խնդիրները, Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն, (Համառոտագիրը մշակուել է 18 Յուլիս 2012ին կայացած՝ «Սիրիա. Տարածաշրջանային Համատեքստն Ու Հայերի Հարցերը» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտայայտուած կարծիքների հիման վրայ), էջ 3:
- ² Արսէն Յակոբեան, *Սիրիահայերը Հայաստանում. Հայրենադարձներ, Թէ՛ փախստականներ (Իրաւական, Մշակութային ու Սոցիալական Աղապարացիայի Հիմնախնդիրներ)*, Երեւան, 2013-2014, էջ 4:
- ³ Հայրենադարձութիւնը սահմանում է որպէս տարագիրների վերադարձը հայրենիք՝ նրանց քաղաքացիութեան վերականգնումով: Հայրենադարձութիւն է նաեւ ռազմագերիների եւ ռազմական գործողութիւնների հետեւանքով իր երկրից հեռացած քաղաքացիական բնակչութեան վերադարձը հայրենիք: Թէեւ սիրիահայերի Հայաստան վերադառնալը հարկադրուած տարագրութիւն էր, այնուամենայնիւ նպատակայարմար ենք գտել օգտագործել «հայրենադարձութիւն» բառեզրը՝ հաշուի առնելով այն, որ սիրիահայերը Հայոց Յեղասպանութեան հետեւանքով Սիրիա տարագրուած արեւմտահայութեան ժառանգորդներն են, եւ նրանք իսկապէս վերադարձել են Հայրենիք:
- ⁴ 14 Յունուար 2013ի թիւ 9-Ա ՀՀ վարչապետի որոշում:
- ⁵ ՀՀ Կառավարութեան 23 Օգոստոս 2012ի 1106 որոշումը: ՍԱՀԻ՝ ազգութեամբ հայ քաղաքացիների՝ 8 Նոյեմբեր 1968ի «Ճանապարհային Երթեւեկութեան Մասին» Վիեննայի համաձայնագրութեամբ եւ դրա յետագայ փոփոխութիւններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացուող պահանջներին չհամապատասխանող ազգային վարորդական վկայականները փոխանակուում են առանց որակաւորման քննութիւններ յանձնելու եւ յատկացում են ՀՀ ազգային վարորդական վկայականներ՝ մէկ տարի ժամկէտով՝ պայմանով, որ այդ ժամանակահատուածում այդ անձինք յանձնեն որակաւորման քննութիւններ (*Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութիւն, Հայաստանի Հանրապետութիւնում Օտարերկրացիների (Սիրիահայերի) Իրաւունքների Մասին*, Երեւան (ա.տ.), 2012, էջ 1):
- ⁶ ՀՀում սովորող բոլոր օտարերկրացիներն օգտուում են ՀՀ օրէնսդրութեամբ սահմանուած իրաւունքներից ու ազատութիւններից եւ կրում ՀՀ օրէնսդրութեամբ նախատեսուած որոշակի պարտաւորութիւններ (*Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութիւն, Հայաստանի Հանրապետութիւնում Օտարերկրացիների*, էջ 2):
- ⁷ Նոյն, էջ 3:
- ⁸ Սիրիահայութեան օգնութեան ծրագրեր /<http://www.agbu.am/am/project-programs-2/mardasirutyun/2013-07-26-10-22-59> :
- ⁹ Ա. Պետրոսեան, «Սիրիահայութեան Հարցը Համայն Հայութեան Խնդիրն է», <https://loysarev.wordpress.com/2012/07/07/> :

-
- ¹⁰ «Համառոտ Տեղեկանք Սիրիահայերի Հիմնախնդիրների Մասին», ՀՀ Սփիւռքի
Նախարարություն, Մայիս 2014:
- ¹¹ Յակոբեան, էջ 5- 6:
- ¹² Նոյն, էջ 6:
- ¹³ Յակոբեան, էջ 31:
- ¹⁴ Նոյն, էջ 9:
- ¹⁵ «Համառոտ Տեղեկանք»:
- ¹⁶ Նոյն:
- ¹⁷ ՀՀ կառավարության որոշում, 2013 թուականի 6 Յունիսի N 656,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84044> :
- ¹⁸
http://www.azatutyun.am/content/article/25428035.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook :
- ¹⁹
http://www.azatutyun.am/content/article/25428035.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook :
- ²⁰ <http://www.azatutyun.am/content/article/25259275.html> :
- ²¹ Սիրիահայության օգնության ծրագրեր
[/http://www.agbu.am/am/project-programs-2/mardasirutyun/2013-07-26-10-22-59](http://www.agbu.am/am/project-programs-2/mardasirutyun/2013-07-26-10-22-59) :
- ²² Հարցազրոյց, Երեւան, 18 Ապրիլ 2015:
- ²³ «Սիրիայի Ճգնաժամը եւ Հայաստանի Ռազմավարական Խնդիրները»,
Մարդկային Զարգացման Միջազգային Կենտրոն, համառոտագիր, էջ 3:
- ²⁴ Հարցազրոյց, Երեւան, 21 Ապրիլ 2015:

**Syrian Armenians in the Republic of Armenia and the Republic of Artsakh:
Current Issues and Likely Options for Resolutions**

(Summary)

Tehminé Mardoyan
tehminemartoyan@gmail.com

The paper portrays how the repatriation of Syrian Armenians to the Republic of Armenia and the Republic of Artsakh (Karabagh) has been accomplished. It discusses the existence of systematic and clear-cut plans for their incorporation into local society and the basic problems the refugees currently face. In fact their repatriation took place in difficult conditions; thus, their incorporation is complicated and takes time.

The paper argues that care from the fatherland is very important and needs to be ongoing. Consistent care should be given to address the difficulties of those repatriated. As some of the Syrian Armenians are having thoughts of further migration, the paper argues that efforts should be made to enable them to reconstruct their lives and envisage their future in their fatherland. In this regard the paper emphasizes the various contributions that these settlers have brought to Armenian society.

The paper argues that support for the Syrian Armenian settlers has been generally successful. Nonetheless, steps should be taken to alleviate any further difficulties that might arise at any moment.